ԿԱՐԾԻՔ

ՍԻՐԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ «ԱՆՁԻ ԵՍ-ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25-33 ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԺԹ.00.01. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է ժամանակակից հոգեբանության մեջ կարևոր, բազմաշերտ և միևնույն ժամանակ համեմատաբար քիչ ուսումնասիրված հիմնախնդրի՝ 25–33 տարիքային շրջանի զարգացման ճգնաժամի ընթացքում անձի Ես-կոնցեպցիայի կառուցվածքային, բովանդակային և դինամիկ առանձնահատկությունների ուսումնասիրությանը, որի արդիականությունը կասկած չի հարուցում: Քանզի հոգեբանական գիտակարգում տարիքային ճգնաժամերի ուսումնասիրությունները երկար ժամանակ կենտրոնացած են եղել հիմնականում մանկության, դեռահասության և կյանքի կեսին բնորոշ ճգնաժամերի վրա, մինչդեռ վաղ հասունության շրջանը, չնայած իր կենսական նշանակությանը, մնացել է գիտական ուշադրության լուսանցքում: Մինչդեռ հենց այս տարիքային փուլում են հաճախ իրականացվում մարդու կյանքի առավել պատասխանատու և ճակատագրական ընտրությունները՝ մասնագիտական ինքնորոշում, զուգընկերոջ ընտրություն, ընտանիքի ձևավորում, սոցիալական և աշխարհայացքային դիրքորոշումների կայացում, միաժամանակ շեշտադրելով այն հանգամանքը, որ 25–33 տարիքային շրջանը հոգեբուժական և կլինիկական հոգեբանության տեսանկյունից դիտվում է որպես հոգեկան խոցելիության շրջան: Այս հանգամանքը առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրությանը հաղորդում է ոչ միայն տեսական, այլև լուրջ կիրառական արժեք: Ատենախոսության մեջ ներկայացված են տվյալ տարիքային շրջանի հոգեբանական խնդիրների պատմամշակութային անդրադարձները՝ գրականության օրինակների միջոցով, ինչը ընդգծում է խնդրի համամարդկային և օրինաչափ բնույթը:

Ատենախոսությունը կառուցված է տրամաբանական, համակարգված և գիտականորեն հիմնավորված ձևով: Ներածությունում հստակ ձևակերպված են հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, վարկածը, մեթոդաբանական և տեսական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը: Նշված բաժինը առանձնանում է ձևակերպումների հստակությամբ և գիտական լեզվի մշակվածությամբ:

Հեղինակը մանրամասն անդրադառնում է ինչպես խորհրդային և ռուսական հոգեբանության, այնպես էլ արևմտյան գիտական դպրոցների ներկայացուցիչների մոտեցումներին: Երկրորդ և երրորդ գլուխներում ներկայացված է փորձարարական հետազոտության կազմակերպումը, կիրառված մեթոդները, ստացված արդյունքների քանակական և որակական վերլուծությունը, ինչպես նաև դրանց հոգեբանական մեկնաբանումը: Ատենախոսության տեսական հիմքերը ընդգրկում են անձի զարգացման, տարիքային ճգնաժամերի և Ես-կոնցեպցիայի վերաբերյալ ժամանակակից հոգեբանության առանցքային մոտեցումները:

Հեղինակը հմտորեն համադրում է Լ. Ս. Վիգոտսկու, Է. Էրիքսոնի, Դ. Լևինսոնի, Բ. Լիվեհուդի, Շ. Բյուլերի, Պ. Բալտեսի, ինչպես նաև Ս. Ս. Խուդոյանի, Վ. Սլոբոդչիկովի և այլ հեղինակների գաղափարները: Հատկապես կարևոր է Ս. Ս. Խուդոյանի զարգացման ճգնաժամերի տեսության կիրառումը որպես մեթոդաբանական առանցք, ինչը ապահովում է աշխատանքի տեսական ամբողջականությունն ու ներքին տրամաբանությունը: Ես-կոնցեպցիայի հիմնահարցին նվիրված բաժիններում հեղինակը անդրադառնում է Ու. Ջեյմսի, Չ. Կուլիի, Ռ. Բեռնսի, Մ. Ռոզենբերգի, Կ. Ռոջերսի և այլոց տեսություններին՝ ցույց տալով տարբեր մոտեցումների ընդհանրություններն ու հակասությունները: Աշխատության կարևոր առավելություններից է այն, որ հեղինակը ոչ միայն ներկայացնում է տարբեր տեսություններ, այլև փորձում է հստակեցնել և տարանջատել հաճախ խառնվող հասկացությունները՝ Ես, Ես-կոնցեպցիա, ինքնագնահատական, ինքնահարգանք, ինքնավերաբերմունք:

Փորձարարական հետազոտությունը կազմակերպված է գիտական պահանջներին համապատասխան: Հետազոտության ընտրանքը բավական մեծ է և բազմազան. ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել է 150 անձ՝ 25–33 տարեկանի ճգնաժամի տարբեր ենթափուլերում, ինչպես նաև ստուգիչ խմբեր՝ 18–23 և 37–50 տարիքային միջակայքերում:

Կիրառված մեթոդների համադրությունը կարելի է գնահատել իբրև հիմնավորված և նպատակահարմար: Օգտագործվել են ինչպես միջազգային ճանաչում ունեցող ստանդարտացված մեթոդիկաներ (Ռոզենբերգ, Ֆիթս, Ուորեն), այնպես էլ հեղինակային հարցարաններ, ինչը հնարավորություն է տվել խնդիրը ուսումնասիրել բազմաչափ դիտանկյունից: Առավելություն է նաև որակական մեթոդների՝ զրույցի և դեպքի վերլուծության ընդգրկումը, որոնք լրացնում են քանակական տվյալները և նպաստում արդյունքների խորքային մեկնաբանմանը: Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է մի շարք սկզբունքային դրույթներով: Առաջին հերթին կարևոր է Ես-կոնցեպցիայի բաղադրիչների դինամիկ հիերարխիայի գաղափարի առաջադրումը, որի հիման վրա ձևակերպվում է «Ես-կոնցեպցիայի լոկոմոտիվային բաղադրիչ» հասկացությունը: Այս մոտեցումը թույլ է տալիս նորովի դիտարկել Ես-կոնցեպցիայի կառուցվածքը ոչ որպես ստատիկ համակարգ, այլ որպես զարգացման ընթացքում փոխվող, վերադասավորվող ամբողջություն: Նորարարական է նաև «Ներհայեցողական Ես» հասկացության ներմուծումը, որը դիտարկվում է որպես ինքնընկալման ինքնուրույն աղբյուր՝ ի հակադրություն «Հայելային Ես»-ի: Զգալի գիտական արժեք ունի 25–33 տարեկանի ճգնաժամի ենթափուլերի (նախաճգնաժամային, բուն ճգնաժամային, հետճգնաժամային) տարբերակված վերլուծությունը Ես-կոնցեպցիայի բաղադրիչների փոփոխությունների համատեքստում: Ատենախոսության կարևոր արդյունքներից է նաև Ես-կոնցեպցիայի կառուցվածքի՝ նոր, ամբողջական և համակարգային մոդելի ներկայացումը: Ատենախոսության արդյունքները նշանակալի ներդրում են անձի, տարիքային և զարգացման հոգեբանության մեջ: Դրանք ընդլայնում են պատկերացումները վաղ հասունության զարգացման օրինաչափությունների, ճգնաժամերի հոգեբանական մեխանիզմների և Ես-կոնցեպցիայի դերի մասին:

Կիրառական առումով աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապիայի, անձնային աճի և զարգացման ծրագրերում, ինչպես նաև կրթական գործընթացում՝ համապատասխան դասընթացների շրջանակում:

Ատենախոսության մեջ առաջադրված գիտական վարկածը կառուցված է տրամաբանական և գիտականորեն հիմնավորված ձևով՝ ելնելով անձի զարգացման ճգնաժամերի տեսական մոտեցումներից և Ես-կոնցեպցիայի կառուցվածքային ըմբռնումից: Վարկածը նպատակ ունի բացահայտելու 25–33 տարեկանի ճգնաժամի ընթացքում Ես-կոնցեպցիայի կառուցվածքային և դինամիկ փոփոխությունները՝ շեշտադրելով դրա առանձին բաղադրիչների ակտուալացման, դեզակտուալացման և փոխհարաբերությունների փոփոխման գործընթացները: Վարկածի կարևոր շեշտադրումներից է այն, որ այն չի սահմանափակվում Ես-կոնցեպցիայի փոփոխության ընդհանուր փաստի արձանագրմամբ, այլ առաջադրում է կոնկրետ մեխանիզմ՝ Ես-կոնցեպցիայի «լոկոմոտիվային բաղադրիչի» փոփոխության գաղափարը, որը հնարավորություն է տալիս ճգնաժամը դիտարկել ոչ միայն որպես սուբյեկտիվ ապրում, այլ որպես Ես-կոնցեպցիայի ներքին հիերարխիայի վերակառուցման գործընթաց:

Այս մոտեցումը գիտական նորույթ է պարունակում և նպաստում է Ես-կոնցեպցիայի դինամիկ բնույթի ավելի խորքային ըմբռնմանը: Վարկածը բավարար չափով ստուգելի է, քանի որ դրա հիմնական դրույթները օպերացիոնալացվել են հետազոտության մեջ կիրառված մեթոդների միջոցով՝ ներառյալ Ես-կոնցեպցիայի ժամանակային (անցյալ, ներկա, ապագա Ես) և կառուցվածքային տարբեր բաղադրիչների վիզուալիզացիան ու հուզական-գնահատողական վերաբերմունքի ուսումնասիրությունը:

Հետազոտության կարևոր առավելություններից է դրա երկփուլ բնույթը. նախ՝ իրականացվել է տեսական խորը վերլուծություն, այնուհետև՝ երկարատև (2013–2025 թթ.) գիտափորձային ուսումնասիրություն, որը թույլ է տվել դիտարկել Ես-կոնցեպցիայի դրսևորումները ճգնաժամի տարբեր ենթափուլերում: Հետազոտության երկարաժամկետ

իրականացումը բարձրացնում է ստացված արդյունքների վստահելիությունն ու գիտական արժեքը:

Մեթոդաբանական առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի գիտափորձի ընտրությունը, որը հիմնված է Ռ. Ասաջոլիի ենթաեսերի տեսության և Մ. Էրիկսոնի հիպնոսի տեխնիկաների համադրման վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տվել շրջանցել ինքնահաշվետվական մեթոդներին բնորոշ սոցիալական ցանկալիության ազդեցությունը և ուսումնասիրել Ես-կոնցեպցիայի ենթագիտակցական շերտերը, ինչը տվյալ թեմայի համար բարդ, սակայն գիտականորեն արժեքավոր խնդիր է: Սա վկայում է հետազոտության արդյունքների հավաստիության ապահովման գիտակցված մոտեցման մասին:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հրատարակված գիտական հոդվածներում:

Այնուամենայնիվ ներկայացված ատենախոսության մեջ առկա են որոշ նկատառումներ ու խնդրահարույց հարցեր, որոնց վերաբերյալ մեկնաբանությունները կցանկանայինք լսել ատենախոսից:

Մասնավորապես՝

• Ատենախոսության մեջ ներկայացված է Ես-կոնցեպցիայի նոր, համակարգային մոդել: Կարծում ենք, անհրաժեշտ էր այն ավելի համադրելի ներկայացնել արդեն գոյություն ունեցող մոդելների հետ՝ ընդգծելով տարբերություններն ու հավելյալ առավելությունները:

• Հետազոտության ընտրանքը ներառում է տարբեր սոցիալ-մասնագիտական խմբեր, սակայն աշխատանքի մեջ քիչ է անդրադարձ կատարվում սեռային, ընտանեկան կարգավիճակի կամ մասնագիտական ոլորտի հնարավոր տարբերությունների ազդեցությանը Ես-կոնցեպցիայի դրսևորումների վրա:

• Հետազոտության արդյունքների համատեքստում որոշ դեպքերում դժվար է տարանջատել ճգնաժամային ապրումներով պայմանավորված Ես-երի վիզուալիզացիայի առանձնահատկությունները նախկին տրավմատիկ փորձի ազդեցությունից, և ցանկալի կլիներ ներկայացնել լրացուցիչ չափանիշներ կամ վերահսկող մեխանիզմներ՝ այդ գործոնների ազդեցության սահմանազատման համար:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ նշված դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է իսկապես մեծածավալ տեսական և փորձարարական հետազոտություն, որն ունի տեսական և կիրառական մեծ նշանակություն:

Եզրակացություն

Ատենախոսությունը ներկայացված է իբրև ավարտուն, գիտականորեն պատշաճ, գրագետ մակարդակով իրականացված աշխատանք: Այն իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Հակոբյան**

Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Սարգսյան